

ՀԱՏԸ 5 Ս. Դ.



ԵՐԿԾԱՐԱԹԱԹԵՐԹ
Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Գ. Ր. Ա. Կ. Ա. Ն. Ե. Ի. Գ. Ի. Տ. Ա. Կ. Ա. Ն.

Ա. ՏԱՐԻ

ՊԵՏՐՈՒԹ

1930

Յունվար 25

ԹԻԻ 2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կա՞յ Լիբանան ահայ գրականութիւն

Փիլիսոփայութիւն (բանաս.) Հրացայ

Զփոխարինում Սէրը (բարգ.) Շատրուան

Կամք

Սէ՛ր (բարգ.) Բ.

Կիլիկիա (բանաս.) Սիր. Օրջանեան

. . . (Մ. Գ.) X

Զօնում եղանակը Տ. Գալայեան

Աչքին Գովքը (Մանկ. գրակ.)

Որու Պարտիմ »

K. Bogharian

Մ Ա Հ Ռ Ռ Ի Բ Է Ն Խ Ա Ն Ա Ջ Ա Տ Ի

Մերի անհուն վիշտով կ'իմանանք ուսուցիչ
պատմաբան, հրապարակագիր, և յեղափոխա-
կան Տիար Ռուբեն Խանազատի մահը:

Խմբագրութիւնս իր ցաւակցութիւնները
կը յայտնէ սգակիր տիկնոջ ազգականներուն եւ
բարեկամներուն:

ԲԱՐԻԳԱՆՈՒՍ

Ուրախութեամբ կիմանամք քե,
Տիար Սեդրակ Կեպեկեան քաղաքս ժա-
մանած է «Յփրաս»ի խմբագրութիւնը
ստանձնելու համար:

Բարեգալուստ եւ յաջողութիւն կը
մաղթենք:

ՄԻՋՈՒՆ

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՊԵՏԼՈՒԹ 1930 Յունվար 25

ԹԻԻ 2

ԿԱՅ


ԼԻԲԱՆԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Գրականութիւնը հայելին է ազգի մը միջավայրին, անկէ կրած տպաւորութիւններուն, որոնց ազդեցութեան տակ կը յառաջանէ քաղաքակրթական բոլոր ազգի արտադրութիւններ, միւս կողմէն տաւալ պայմաններով ազգին մէջ ստեղծուած ձգտումներուն եւ խտէալներուն:

Միջավայրը ցուրտ իրականութիւն մ'է, որ կը պարտադրէ գրողն ու մտածողը ձեւաւորուիլ իր վրայ: Բայց միջավայրը, որքան ալ դրական գործեր արտադրել տայ, այդ գործերը չեն կրնար ձեւ ու գոյն զգենուլ, գրականութիւն կազմել: Հատ ու կոտոր զործեր, որքան ալ պերճաշուք ըլլան չեն կրնար ազգին անհատական գրոշմը կը ող գրականութիւն յառաջացնել:

Որպէս զի ազգ մը կրնայ ունենալ իր առանձինն գրականութիւնը, պէտք է, որ ազգը ամբողջութեամբ, եթէ չափազանցութիւն է, զոնէ մեծամասնութեամբ նոյն ձգտումն ու երազը, նոյն խտէալն ու տեսլականը առջեւ ունենայ: Գաղափարը գերելու է գրողներու զգացումն ու հոգին: Եւ ան ալ նոյն գաղափարը: Գաղափարը իրեն քաջելու է ամենու երեւակայութիւնը: Զգացումներ անով համակուելու են: Երազներ անով անանելու են: Գրիչներ անոր ցաւի տաղանին, ուրախութեան բաժակին, ոտեղծագործ աշխատանքին, զոհ՝ բերնող ոգւոյն մէջ թաթխուելու են, որպէսզի կարելի ըլլայ ձեւաւորել, յառաջացնել գրականութիւն:

Այս չափանիշով եթէ ուշագրութեան առնենք գաղութահայ յետ պատերազմեան գրականութիւնը՝ արտի անհուն վշտով մը պիտի համակուինք: Ազգային կազմակերպութիւններու անխլաճանաչական դրաթեան ճշմարիտ պատկերը ցուցած պիտի գտնենք գաղութահայ գրականութեան մէջ: Անհայրենիք այս ազգին տարտղնուած վերապրողները հոգեկան ձգտումներու չբաւորութիւնը կ'ապրին: Շէնշող արեւուն տարու թեան փոխարէն ձմեռնային սառնամանիքը կը տիրէ գրական Հայ աշուխ:



վրայ, որ երբեմն Գուսաներու խումբերը կ'ապրեցնէր:

Այս օր նոյն իսկ նոյն կապոյտ երկնակամարին տակ կեանք տուող գրական կտորներ ոչ մէկ համանմանութիւն ունին իրարու հետ՝ ըլլայ ձեւի, գոյնի, գաղափարի:

Գտնուեցան հոսանքներ, որոնք մասնաւորաբար երիտասարդ գրողներու առջեւ դրին գաղափարներ, բայց անոնց յառաջացուցած արդիւնքը ապացուցուց թէ լեռնաբան էին անոնք: Պարտադրանք գոյութիւն չունի իտէալի աշխարհին մէջ, այն ատեն երբ կեանքէն չբղիւր:

Չափահաս գրողներ գուցէ կարենային օճախ մը հիմնել և շուրջերնին հաւաքել երկրպագողներ, անոնց տալով իրենց գաղափարը, իրենց ձեւը և ստեղծել գրական հոսանք մը: Սակայն ցուրտ իրականութիւնը այնքան զօրաւոր էր, որ չունեցանք գրական տիտան մը զայն արհամարտող: Ազգն ամբողջութեամբ վատուած ցած էր ու իրական մշակներէն ու մանք ինքզինքնին նուիրեցին աւելի դիւրատար աշխատանքներու, մինչեւ իսկ քաղաքական գործունէութեան ու անոր ցուրտ շուշին տակ գօտացուցին ինքզինքնին կործանելով իրենց երբեմնի հմայքն անգամ:

Ամբողջ գաղութահայ գրականութեան համար ըսուած ճշմարտութիւնը քիչ մաւելի չեշտուած կարելի է ընդունիլ Լիբանանահայութեան համար:

Լիբանանահայութեան մեծամասնութիւնը տնտեսական խիստ անըպատկացութեան մը մատնուած, գրեթէ խելափրոյս վիճակ մը կ'ապրի, Այնպէս որ նոյն իսկ Լիբանանի հմայիչ լեռներն, անոնց կողքերուն փռուած կանաչութիւնները, որոնք կէտ կիտուած են սպիտակ շէնքերով, չկրցան հմայիլ գրողներու ցանցառութիւն մ'անգամ, հակառակ որ դարեր առաջ հեռուէն կրցած էին ծնունդ տալ Սողոմոնեան բանաստեղծական դրչին ու դարեր վերջ անոնց կողքին նմոն եկած էր երգել բնութեան գեղեցկութիւնը:

Երբ, ձեւի ու գոյնի այս գեղեցկութիւնը չէ կրցած գրաւել երիտասարդ հիւզեր, ալ ինչպէս կարելի է մտածել թէ մոխրացած հայրենիք մը, իր վշտերով ու աւերով, վերածնուած հայրենիք մը իր աշխուժով ու աշխատանքով պիտի կրնային հրապուրել զանոնք այնքան հեռուէն:

Լիբանանահայութիւնն ալ որպէս մէկ հատուածը գաղութահայութեան կ'ապրի անկոյտն կեանք մը, անկայուն միջավայրով ու անտեսութեամբ, ուստի, չէ կրցած կապուիլ որոշ գաղափարի, իտէալի:

Մէկ խօսքով Լիբանանահայ գրականութիւն գոյութիւն չունի: Սէրըն ու վիշտը ճիշդ է, որ երբեմն թրթռացուցած են այս կամ այն քնարը, սակայն անոնք եղած ու մնացած են առաւելապէս մէկ ընդօրինակութիւնը նախորդներու: Հին կաղապարով նոր գրականութիւն չմշակուիր:

Սակայն բոլոր գաղութներում էլ դուրս գալիս առհասարակ գեղեցիկ զրահանութիւնը ստեղծելու հողը ունի Լիբանանահայութիւնը: Հայ միաբն ու երեւակայութիւնը Լիբանանի այս գեղեցկատեղի ծովափէն աւելի գեղեցիկ վայր մը չէր կրնար գտնել սնանելու:

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ

Ահա, ես եմ, պայծառ գիտութիւնը գիտութեանց,
Որ կը պահուի ժպտեմ խաւարին փոքր անբախանց
Ու կը պարզեմ կոյր աչիքն արեւոյտներ երմանում
Կեանքի ուղին հարթելով կը դարձնեմ հեշտ անփութ:
Կը սահմանեմ ես կեանքի «ինչո՞ւն» ինչպէ՞ս անմեկիք
Կը քափանեմ վեհամալ Տիեզերքի գաղտնիքն,
Կազմուցնեմ կրօնի կռու եղբորն անգիտակ
Ու կը հասցընեմ Մարտիան վէտ հակաճշտ պիտակ:
Մտքի ժանրոս խորհերն հոծ կը արեմ հուր կայծերով,
Տղիտութեան շղթաներն կը սղոցեմ անխռով,
Կը սովորեցնեմ Անհատին խորհել խորհիլ առշուէ
Ու հանչնալ իր հիւլէ ոչնչութիւնն ալ անպէտ:
Մտախառնալի հոգիին Անմահութիւն կուտամ ես,
Գեղեցիկն: Եւ մարտին ու բարին կը ծորին յոր իմ շունչէս
Յաւիտեան ծախքեր կը բեքեմ մրրամած
Մարդիկ իմ ֆոփս կը փնտռեն իրենց սկիզբն մոռցած:

ԵՓՐԱՏ

ՀՐԱՅՈՒՅՏ

Խաբէրդ

ԶՓՈՒՍԱՐԻՆՈՒԱԾ ՍԵՐԸ

Ինչո՞ւ ծնած եմ ես բոլոր այս
սէրերով, այս վառ ցանկութիւններով
Ինչպէ՞ս կրնան բարի բոլոր
անոնք, երբ կ'առաջնորդեն մի-
միայն ցաւի եւ յուսախաբանութեան:

Կ'ուզէի սիրել մէկը, սիրել
զայն մէկ անգամ և յախտնան.
Կ'ուզէի ինքզինքս տնոր միայն
նուիրել, անոր համար ապրիլ, ա-
նոր համար մեռնիլ և գոյութիւն
ուենալ լոկ անոր համար:

Բայց, ամա՞ս, բոլոր այս քն-
դարձակ աշխարհին մէջ չի կայ
մէկը՝ որ զիս սիրէր այնպէս ինչ-
պէս պիտի ուզէի սիրուիլ անկեց.

մէկը՝ զոր կարենայի սիրել՝ սիրե-
լու ամբողջ վարդապետութեամբ:

Ինչ պարագ եւ ինչ ամայի
կ'եղանայ ինձ աշխարհէս երկինք
Ինչո՞ւ առած եմ ինձ այս սէրերը,
միայն իյնալու եւ լսածութիւն հա-
մար:

ԼՈՆԿԵՆԼՈ

Երբ երկնքի վրայ ծիածան մը
տեսնեմ՝ սիրտս կը բաշխուի Այս-
պէս էր ան երբ կ'եղանայ սիրտս,
այսպէս է այժմ ան՝ երբ երկտա-
սարդ եմ և այսպէս պիտի ըլլայ երբ
եւ ծերանամ և կամ երբ մեռնեմ:

ՈՒՐՈՐՏՈ ՈՒԹՈՐԹՂ

Երուսաղէմ Թրդ. ՇԱՏՐՈՒԱՆ

Կ Ա Մ Ք

Ամեն գործարանաւոր իր գոյութիւնը տեւականացնելու համար կը կարօտի անուշիկ եւ ուրեմն բնութեան մէջ գոյութիւն կ'առնեն գոյգ ուժեր մէկ մէկու. հակառակ Յարձակողական եւ ուրեմն ներգործակուն ուժը որ ցոյց կը արուի ուրիշի մը մահուան մէջ իր տեւականացումը փոքրիկ գործօններու կողմէ, իսկ միւսը փախստական՝ կրօնորական շարժումը, որ հալածւող գործարանաւորութեան մէջ ծնունդ կ'առնէ:

Ահա, գիտախօսու առիւծը իր ահաբեկի մոնսթրիով սուր սուր ժանիքներով վեհօրէն կանգնած է անտառին զիմաց արիւնոտւշտ, յաղթական:

Անդին եղջերուն առիւծին մոնսթրին էն ահաբեկած, վարկեան մը կը սարսրոյց մացառներուն մէջ պահուրտած ու յանկարծ յիշելով իր թոշոյ սըրունքները, գլուխը արթննալու թափահարում մ'ընելէ ետք, կը սուրայ լեռն իվեր հովի մը նման, աներկիւղ, եղջերները հովուն, վերջապէս կը հասնի դունչը դուլով տուռակին. զոհ է ու հպարտ, ազատ է այլեւս եւ ի զո՛ւր առնադէմ առիւծին մընսթրիւնը անջրպետին մէջ կը կորսուի անարձագանք:

Առիւծին գունջը կարմիր արիւն, եղջերու ին պապկած լեզուն սառ ջուր երկուքն ալ յաղթական, երկուքն ալ կ'ապրին:

Ու դարեր անվերջ պատառող ու պատառող կը քաշեն իրենց գոյութիւնը նոյնքան հաստատուն, նոյնքան երջանիկ, որքան նախապատմական սկզբնական օրերուն:

Մինչ մակեր ու բուսակեր իրենց իւրայատուկ զէնքերով սպառազինուած հրապարակ են իջեր, անոնց ճիշդ մօտը կայ էակ մը, որ կը ծնունի անդէն, կը մեծնայ անդէն, կը մահանայ անդէն:

Օրօրոցին մէջ ննջող մարդն է ան: Ոչ թեւեր ունի ճարեկու տաակ, ոչ սրունքներ՝ փախչելու կարող, ոչ ժանիք ու ոչ մագիլ: Տկար է՝ կ'մը, որ մինչեւ գերեզման ոչ մէկ ֆիզիքական զէնքի պիտի տրանայ:

Բայց բնութիւնը անոր տուած է իմացականութիւնը, ստեղծագործող այդ հրաշալի մեքենայ ուժը: Ահա թէ ինչո՞ւ այնքան անգործակ մը կրցած է գոյատեւել իրմէ անհամեմատ դժուար, որ թշնամիներով չըջուպատուած ըլլալով հանգրծա:

Միջավայրը, որուն մէջ գրուած է գործարանաւորութիւնը իր հազար ու մի գրգիռները կը հրամցնէ: Ու գործարանաւորութիւնը պարտի այդ գրգիռները առնել իր մէջ, իւրացնել:

Բոլոր գործարանաւորներուն մէջ մարդն է միակը, որ գիացած է իրեն հրամցուած այդ գրգիռները առնել իւրացնել եւ զայն ինպատու իր գոյութեան պայքարին ծառայեցնել:

Իր բոլոր մտքի կարողութիւնները գործունէութեան կը մղէ զինք: Ու մարդուն գործունէութեան մէկ մասըն է կամենալը:

Մարդը իր իմացական կարողութեամբ կրցած է կազմել փորձառական գիտութիւնը: Մինչդեռ կենդանիները մանկական չըլանէն մինչեւ մահ ունին շարժիչ ազդակ մը, բնագոյր, որով կը ճանչնան օգտակարն ու վնասակարը, բարեկամն ու թշնամին: Անոնք ունին զգայարան պատուհաններ, ուրկէ կը մտնեն բնազդական մղումներ արթնցնող աբսալիւ գրգիռները, որոնք իրենց անմիջական ազդեցութիւնները ի գործ դնելէ ետք կը մարին, կ'անհետանան:

Այս կոյր բնազդին արդիւնքն է մանկան առաջին ճիշդ անօթութեան մը կամ ցաւի մը համար արձակուած:

Այս օրինակ գործունէութիւն մը կը նմանի հայելիի մը վրայ ինկած պատկերի մը, որ հեռանալու վարկեա:

նին կանհետացնէ անոր վրայ թողու-
ցած իր ազդեցութիւնը:

Մարդը սակայն՝ բնազդական գոր-
ծունէութեան տպաւորութիւնները
կը վերածէ փափաքի, և ազդեցութիւն
մը տեսնելով, կամ յոռի գրգռել մը փա-
խուստը մարդուն միտքին առարկայ
կը դառնայ ու ասիկա դեռ յղացումին
դազաթնակէտը չէ: Մարդը սակայն մեծ
կարողութիւն մը ունի: Ան շրջա-
պատուած է իրմէ դուրս, իրմէ ան-
կախ հազար ու մի երեւոյթներով,
որոնք պատահական քմահաճոյքներով
երբեմն կրնան իր փափաքներուն գո-
հացում տալ, սակայն կուզայ ժամա-
նակ, բան մը, որ շատ աւելի յաճա-
խադէպ է, երբ արտաքին կոյր աշ-
խարհը անգիտակ մարդուն փափաք-
ներուն՝ անոր հակառակ ուղղու-
թիւն կը բռնէ, կամ երբեմն նոյն իսկ
յարձակող կը դառնայ մարդուն կառու-
ցած երեւակայական շէնքին վրայ եւ
քար ու քանդակներով կը թողու:

Այս պատճառով մարդը կը մղուի
աւելի բարձրագոյն կարողութեան մը
յայտնագործումին: Կամեցողութիւնը
երեւան կուդայ:

Կամեցողութիւնը գիտակից ու ա-
զատ դործաւնէութիւնն է մարդուն:

Ազատ բառը չփոթեցնէ մեզ: Մար-
դը պայմանաւորուած է իր շրջավայ-
րէն: Մարդը կրնայ անոր հրաժարու-
ցած պայմաններէն մին առնել եւ
թողուլ: Այս, այս առումով միայն
կրնէք գիտակից ու ազատ գործու-
նէութիւն մէ կամենալը: (շար)

Ս Է Ր

Չոր մացառներ ինձ օայն խոց
Փուռ մը ծակէր սրբա վռակով,
Ոչ մէկ քիթեւ կար եր յածիլ:
Միայնութիւն . . . ժանտաստիլ:
Նրբ բու ձեռքը ես բռնեցի
Նրկին դարձաւ ծաղկանցի,
Փուռերն գային ինձմէ մեկդի
Եւ շուտ տեղի տուին վարդի:

Թարգ. Բ.

ՕԹԹՕ ԷՕՐԹԷԼ

ԿԻԼԻԿԻԱ

Արեւ չունիս, ո՛վ Կիլիկիա պատերի.
Պատեր ե քեզ աղջամուղջը սոսկալի,
Ձի բարձրաբերձ լեռանցք վրայ անա-
կու:

Ձիկան այլեւս գուաբ պարերն հայե-
րու:

Քու աղէքը չեղաւ երբեք, ո՛չ փոքրիկ,
Ո՛վ պատուական սիրուն անմահ հայ-
րենիք:

Սին ուն, ձիհուն հերիք յաջիք անհերունջ
Չառիք գոճէ, հոգէ ազաւ, խաղաղ
շունջ:

Անդոհական վերջեւումով միտ իգեք,
Կուղղեմ յաւեւ սեւը սրձաւ սրձաւ ի
Ձի դո՛ւ միայն ցաւոս հոգւոյս սեւ
դարձաւ:

Եւ դարձանք խոցոս սրձա վռակաւ:
Ի՞նչ եղաւ քեզ. որ յո՞ւս ես յաւիտեան,
Ո՛վ Կիլիկիա, ո՛վ օրօրոց մանկութեան
Ո՛չ մի բռնուն, ո՛չ մի կռուցիկ սուր-
գիր,

Բերաւ ինձի գարունի կեանք բե-
կալիք: Օրօրեցիք անմեղ հոգիս երազիտ
Քնացուցիք սրձա յոյգերն արեւոս,
Ո՛վ հայկական հին մեծ երկիր Կիլիկիա
Մոռցա՛ր արդիք այնքան շուտով ան-
խնայ:

Օր մը կրկին երկինքներէդ մթամած
Պիտի ծագի արուստս մը վեհապան
Ու այն ասեմ, դո՛ւ Կիլիկիա պատուա-
կան

Պիտի լիճիս ինձի համար գերեզման

15 Դեկտ. 929

Մուսուլ

ՍԻՐ. ՕՐԶԱՆՆԵՆ

ՎՐԻՊԱԿ

Ներկայ թիւին Բ. էջին տպագրութեան
ատեն կատարուած են կարգ մը սխալներ, ո-
րոնց կարեւորներն են.

Վերէն 15. տող գումարացին — գումարացին
Վարէն 14. յ. նման — Ուրնան

Խմբագրութիւնը ներողութիւն կը խնդրէ
ընթերցողներէն, ապագային նման սխալնե-
րէ զգուշանալու պայմանով:

Շար Ա. Թիւ էն

Մ- Գ: Ին

Մաքուր դարձուցիր էլը, բայց եւ
բժաւորեցի, քանզի մարդիկ ամենա
դէտ չեն եւ ճեմակ էր պարագ էջ
կրնար նկատուիլ, մինչ լուսըսը
միշտ ալ պարագ չէ եւ ուստի իմ թո
ղոցած այս կէտերը լուծիւն կ'ի
մացնեն:

.....

Ալ անունդ չեմ դներ, քանզի ինչ
իրաւունքով գործածեմ անուն մը,
որ անպատասխան կը թողու եղած
տոաւարկ մը, գրուած երկտող մը,
թէկուզ խիստ անվարժ գրչէ ելած:

Այս առթիւ յանկարծ կը յիշեմ հո
ղեկան վիճակը անոր, որ կը խնդրէ
ձեռք մը ու պատասխան չտանաբար
Սարսափելի է:

Լուս մնացիր: Ինչո՞ւ: Զեմ գիտեր:
Պատճառները կրնան այլապէս ըլ
լալ:

Մուլութիւն արգեօք: Բայց ինչ
պէս կարելի է մէկը ծոյլ նկատել, երբ
ան դեռ երիտասարդ է, այսինքն
կեանք ու կոխ համակ: Պատերազմի
դաշտին վրայ հանգող, նիւրող գին
ւորն անգամ կարելի չէ ծոյլ նկատել
քանի որ անոր ներքը կը դարբնուի
ուժը դիմադրող ու յաղթահարող,
ալ ո՞ր կը մնայ ոտքի վրայ, հրացա
նը ձեռքին, պատնէջին ետեւ, թնժ
բին վրայ, ձիուն կոնակին, ու նման
գիրքերու մէջ գտնուող գինւոր:

Ու գուցէ, որ գինւոր չէ եւ կրթա
կան մարդին, ո՞չ, չէս կրնար, չէր
կրնար ծոյլ ըլլալ:

Զկամութիւն: Բայց ո՞վ կը պար
տադրէր քեզ անկամայ յանձն առնել
այսօրինակ գործ մը: Պատու մը սուրբ
է, զայն պահելը պարտականութիւն
ներս գեղեցկագոյնն ու ազնուագոյ
նը: Կը հաւատամ ուստի, թէ չկա
մութիւն ալ չկայ:

Ու այսպէս, եթէ, Թուին մասան
ցը ընեմ, բոլոր ներքին պատճառնե
րուն, վստահ եմ թէ ամենքն ալ պիտի
արդարանան եւ ուստի քու մէջդ պատ
ճառ մը չեմ գիտեր լուս մնալու: Հայ
օրիորդի մը հոգին վերլուծել զժուար
է, բայց գոնէ անկեղծութիւն մը կայ
որը կը թուրտորէ մեզ բոհել, թէ կր
նանք անոր հոգին վերլուծել եւ քնն
նադատութեան բովէն անցնել, որով
կ'ընկրես անուշտ, երբ կըսեմ բոլոր
ներքին պատճառներդ կ'արդարա
նան:

Փակագիծ մը բանամ, ինչ բոհել է
արդարանալ: Արդարանալ կը նշանա
կէ դիմացիներ լացաւոր չեմեկու սր
բամաղութիւն ունենալ, Հաւատա
բոլոր դատաւորներն ալ տառելա
պէս իրենց տրամադրութիւններէն
վարուած կուտան վճիռը: Ըսել է
այս վարկեանիս հոգիս յեղ հանդէպ
լաւ արամադրուած է, այսպէս ծան
րօրէն պիտի դառապարտէի քեզ:

Ուստի դուքսը փնտռեմ լուծեա
նըդ պատճառը: Մոռող չի թողուր
արդեօք: Եթէ ճիշտ եմ, զժուար է
այս մաթին խօսիլ:

Մոռողը յաճախ կեանք կուտան
մարդուն, բայց կը կապուեն անոր
մէկ ուրիշ կեանքը: Իրաւունք ու
նիւն: Այո՞ւ եւ ոչ:

Այո՞, քանի որ իրենցն ենք: Ան
հուն ցաւերով կը ծնին մեզ, երկուն
քի ծանր վարկեանները կ'ապրին:
Գիշեր ու չերեկ մեզ համար կը շնչեն
եւ ուստի պէտք է հսկեն մեր վրայ,
ուստի իրաւունք ունին պահանջելու
ըլլալ այն, ինչ որ կը կամին:

Բայց ո՞չ ո՞վ բաւ, որ մեզ բերեն
այս ցաւերու աշխարհը: Եթէ իրենց
հաճութիւն համար մեզ դատապարտած
են աշխարհային տանջանքներուն,
ինչո՞ւ ուրիշն չպիտի թողուն ըլլալ
այն, ինչ որ մենք կը կամինք: Եւ
ո՞վ դրաւ մեր մէջ լարտայայտուելու,
ըլլալու, ըզձալու, կամենալու, դա

տելու աւժը եւ ան ալ այս ձեւը, որ այժմ ունինք: Ո՞վ դրաւ մեզ այն շաղին մէջ ուրկէ կը քայնըք եւ որուն առջեւ պատնէշ կանգնեցնել կը ջանան:

Մենք մեզի հետ յենչ ինչ ինչ: Ինչ որ իրենք տունն: Ասկից առինք ուրիշ բաներ: Այն բնկրութեան, որուն յանձնեցին, այն պայմաններէն որոնք չըջապատեցին մեզ, մէկ խօսքով ոչ մէկ բան ստեղծե-

ցինք: Ասէն բան կամ իրենք տուն, կասանոնք որոնց յանձնեցին: Աստի մենք յանցաւ որ չենք, եթէ իրենց անհաշիւ գործերէն մեր մէջ ստեղծուած է բոլորովին տարբեր մտածումքան ինչ որ իրենք կը կամենային:

Աստի անարդար են անոնք:

Ահա իմ խօսքը:

X

ՉՈՆՈՒԱԾ ԵՂԱՆԱԿԸ

[Շար. Ա. քիւեճ]

Այսպէս էր Արտաշէս: Իւրաքանչիւր այցելութեանս մէկ եղանակ կը նուազէր: Միեւնոյն տխուր եղանակը: Երբեմն կ'ըսէի, «Արտաշէս, ինչո՞ւ ուրիշ եղանակ չես նուազէր»:

— Ասկա չստ կը սիրեմ, անոր մէջ հոգիի որ պատու իրիչը լայն ուրիշ եղանակներ կը ձանձրացնեն զիս, կը զգուցնեն երաժշտութեան, կը պատասխանէր:

Օր մ'ալ պատմեց. «Երբտառարդ մը սեռնիկ վերջ, իր սիրուհին անոր շիրմին վրայ ծնրաղլը կ'աղօթէ Աստուծոյ, որ զինք ալ տանի անոր ետեւէն: Արտասուքով կը յայտնէ Աստուծոյ, թէ ես անոր մահէն ետք չեմ կրնար կենակցիլ ուրիշ հետ: Անկէ ետք աւելի հետաքրքրուեցաւ եւ քաւելի ուշաղլը մտկիւրի»:

Օր մը առանձնացած՝ Արտաշէս եւ ես իտիտու տնակի մը մէջ կը խօսակցէինք: Սենեակը աղօտ լոյսի մը քերթեւ մշուշապատ մթնոլորտի մը երեւոյթն ունէր: Բարեկամս բոլորովին փոխուած էր: Ե՛ն, ո՞վ գիտէ երկու ճնշիչ տարիներ օրքան կնճիւղներ ձգած էին մեր ճակտին: Անոր ճակտին կնճիւղներու խուրձ մը խոր խոր ազոններու նման կ'երկարէին, կը մաքէին քունքերուն մօտիկը:

Չկային կարողութեւն վառվորուն այտերը, չկային սիրուն ձայնը, սեւ ու երկար մազերը: Դեղնած ու ոսկրոտ զէմքը կմտաքի մը շուրտ տպաւորութեւնը կը թողուր զլոռլին վրայ: Շատ փոխուած էր:

Սակայն կը խօսէր եռանդուն, աչքերը, որոնք երբեք մարիլ չգտցան, արտեւանունքին խորը կը չողային անվերջ: Անոնց փայլունութեան սակդառն վիշտ մը պահուած կ'երեւէր որ նայուածքն հետ կը փոխադրուէր ինձ: Ե՛նչ որ կնճիւղ փոթփոթութեւն մը նման ցաւի մեծ արտայայտիչ մ'էր: Եւ ասէր տիեզերքը, կ'ստէր մարդկութեւնը որովհետեւ տիեզերքը ծնունդ տուած էր կատարելազործուած դուանին, մարդուն, որ այնքան ցաւեր, կոտորացող վերքեր բացած էր իր անգոր, երամեշտի զգայուն սրտին եւ սրունց ճնշումին տակ հալած, մաշած էր: Կեանքը զգուցիւ էր:

Բաւական երկար, այլ վշտոտ խօսակցութենէ վեր ետք, Արտաշէս ոտքի ելաւ, ելկու քայլ յոռաջացաւ զկպի մոթ անկիւն մը եւ սեւ ու փոքր արկղ մը առնելով ետ եկաւ: Չութակն էր:

Գեցաւ դիմացս ու սկսաւ նուազել: Աշխոյժ չկար Պարզ իբր ձեւակերպութեւն կը կատարէր: Լրացաւ ու նքատեցու:

Սղանակը հինէն կը տարբերէր:

Հին եղանակը պահանջեցիւ Հին

յուշերուն մէջ ապրիլ կը փափաքէի:

Պահանջքս անկատար մնաց: Արտաշէս լու՛ռ, գլուխը խոնարհած, ակնարկը գետին դամած կը կենար: Զգացի որ դառն յիշատակներ թարմացուցին սրտին ցաւերը:

Գլուխը վեր առաւ: Ակնարկ մը նետեց վրաս. կրկին խոնարհեցաւ: Աչքերուն մէջ բխրեղացած արցունքներ կը փայլէին, որոնց յորդումը մազէ կախուած էր: Զ կրցայ համբերել, նետուեցայ անոր ուսին ու ձիւսս Արտաշէսս պոռացի:

Արտաշէս գլուխը բարձրացուց: Աչքերը որոնք երախայի մը պէս չիթ չիթ արտասուք կը հոսեցնէին և ըսաւ. Այն եղանակը, որ կը պահանջես, նուիրած եմ սրտի մը: Եւ իր գիւպկին առջև երգում. ըրած եմ ալ չնըւագել:

Կը սիրէի զայն. սիրած եղանակս անոր նուիրեցի: Ալ չեմ կրնար նըւագել: Անով իր աչքերը յաւիտենապէս գոցեցի... Հիւանդ էր... մահամերձ հիւանդ... Անկողնին մէջ

կմխագած հագիւ կը շնչէր. դժուար էր դէմքը սաւանէն զատել: Սեւ աչքերը փոսացած այլ կը կայծկլտային... մէ, այդ կ'ըջերր. կ'ըլամ, որ տա կաւին սիրտս կ'այրեն: Այդ շողարձակ, սիրուն աչքերը կըսէին ինձ. «Արտաշէս, օգնէ ինձ, հոգիս կը խըլուի մաս առ մաս... բարի հոգիներ են անոնք... մի՛ դպչիր անոնց, որովհետեւ անմեղ եմ և մաքուր: Ոհ, Արտաշէս՛, երգէ, նուագէ, որպէսզի այդ հոգիները հրճուին, պար բռնեն ու հոգիս խաղցնեն»:

Ու ես կը նըւագէի միշտ կը նուագէի, որմէ դո՛ւ մահուան ծոցէն կը ժպտէր ինձ... Երթալով մարմինը կը հիւժէր, անկողնին կը փակչէր ու կը դժգոհէր... մագերը խոլ, խոլ ցիր ու ցան բարձն ու վերմակը կը զարդարէին... Բժիշկը ես էի, դարմանը եղանակը: Կը հրճուէր ու կը ցնծար. գիտէր, կը յիշէր այն օրը, այն գերեջանիկ օրը, երբ իրեն առաջին անգամ նուագեցի այդ եղանակը, որուն փոխարէն իր սիրտը ինձ տըւաւ...»

[Շար.]

Տ. ԳԱԼԱՅԻԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵՐՆ

Խմբագրութիւնս սիրով էջ մը պիտի յատկացնէ մանկական գրականութեան: Առայժմ «Սինոն»ին ծաւալը չթույլատրէր, որ հէքիաթներ և նման երկար պատմութիւններ գրուին այլ նախընտրութիւնը պիտի տրուէ կարճ ոտանաւորներու:

ԱԶՔԻՆ ԳՈՎԷՐ

Աւա՛ղ, խօսի մէջ չեմ վարդեթեւ կոչուիմ ես Կարապետ, Բայց սա սեւ սեւ աչքերուս ծոց Կրնամ քաղել ձեր վիճ ու խոց:


ՈՐՈՒ ՊԱՐՏԻՄ

Աչքերս՝ փայլակ,
Դեմքս կրակ
Ես դուրս կուսամ:
Լ քաղցրահամ
Խօսքեր յաճախ
Հասիմ անվախ
Իմ սա բերեցեմ:
Ու այս ամեն
Որո՛ւ պարսիմ...
Քեզի՛... մայր իմ:

Ասոնց փոխան Տամ Բեզ համբոյր
Ուսկի՛ց կ'ուզես, աչքս, դեմքս,
Որ վարդերէն առաւ իր քոյր:
Ոչ', երկուեքն ալ Տամ ես Բեզ:

Տեք եր Տեքեմ Կ. Տօնիկեան

Պելլուք «Լիբանան»



Վ Ա Ր Չ Ա Կ Ա Ն Ա Ջ Դ

Թերթերէն կը խնդրուի փոխանակել:

Հրատարակութիւններ — դիրք, պոօշխւր — եթէ զրկուին խմբագրու-
նը սիրով տեղ պիտի տայ ծանուցման:

Յօդուածները պէտք է գրուին մէկ էջի վրայ:

Չհրատարակուած ձեռագիրները ետ ստանալու համար փոսթի ծախս
զրկուելու է:

Վարչութիւնը որոշած է իր յարգելի բաժանորդներուն և հայ հասա-
րակութեան հրամցնել նորընտիր պատմուածքներ առանձինն պոօշխւրով:

Ռէժլամի վերաբերեալ ոեւէ ծանուցում լաւագոյն պայմաններով կը
տանձնէ «Սիհուն»ը:

ԲՄԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Սիւրիոյ ևլ Թեանսայի համար տարեկան 30 Թեանք:

Ուրիշ երկիրներ տարեկան 2 տար կամ 50 Թեանք:

Պէյրուքի մէջ ձեռք կը ծախուի 5 Ա. Դ.

Ո Ւ Շ Ա Դ Ր ՈՒ Թ Ի Ի Ն

Դրամական առաքումները կատարել

(միմիայն B. P. 718)

Պ. Կ. ՏՕՆԻԿԵԱՆ Ի անունով

ՈԱԱ Հիմնարար Պիտ. Պրադ.



FL0683192

[204.]

ՇԵՆԱ

ՊՈՂ
1373

Տ Պ Ա Ր Ա Ն

Կ. ՏՕՆԻԿԵԱՆ

Ձեր տպագրական ամէն տեսակ գործերուն համար դիմեցէք մեր տպարանը՝ Հայերէն, Թրանսերէն. Արաբերէն գիրերու ճոխ մթերք:

Դիմել Կ. Տօնիկեան

Փօստգարիչ Թիւ 718

Պէյրուք

Կ Ը Փ Ն Տ Ռ Ո Ւ Ի

Կը փնտռուի բնիկ Ատանացի ար-
հետով ատաղձագործ Պ. Գարեգին
Պէրպէրեանը [հօրը անունը Մելքոն,
մօրը անունը Սեւա:] Յիշեալը Կ. Պօլիս
քոյր մը ունի Տիկ. Նազանտէր [ամու-
սինը Նշան] Պարոնեան: Յիշեալը 5
տարի առաջ Կ. Պոլսէն մեկնած է Մ.
Նահանգները: Հասցէն գիտցողնե-
լէն Կը խնդրուի խմբագրութեանս
հասցէով իմացնել մօրեղբօր Պ. Արամ
Դալաճեանի և քրոջ տիկ. Նփրաքսէի:
Կը խնդրուի երիտ. Հայաստանի
խմբագրութենէն արտատպել: